

## Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2019թ. փետրվարի 23-ի թիվ 36 նիստում

Գիտական խորհրդի նախագահ \_\_\_\_\_ Ա.Վ. Յուզուլյան

### Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ  
«ԱԿՈՒՆՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

#### 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի (ԵՊՀ ԻՄ) «Ակունք» գիտամեթոդական հրատարակության խմբագրության /այսուհետև Խմբագրություն/ հիմնադիրն է ԵՊՀ ԻՄ-ը /այսուհետև Հիմնադիր/:

1.2. Խմբագրության հասցեն է՝

ք. Իջևան, Ուսանողական 3, հեռ. 4-00-50; 3-65-97

1.3. Խմբագրությունը իրավաբանական անձ չէ և գործում է Հիմնադիրի կողմից հաստատված կանոնադրության հիման վրա:

1.4. «Ակունք»-ը հրատարակվում է պարբերաբար տարեկան առնվազն երկու անգամ, հայերեն, իսկ առանձին նյութերով օտար լեզուներով /ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն/, հոդվածները ընդունվում են տպագրության երաշխավորությամբ կամ գրախոսությունից հետո, ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան:

1.5. «Ակունք»-ը կարող է ունենալ նաև նույնանուն և նույն ծավալի հավելվածներ:

## 2. Կազմակերպական կառուցվածքը

2.1. Հիմնադրի, գլխավոր խմբագրի, խմբագրության խորհրդի դրամական, գույքային և տնտեսական հարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրերով, որոնք չպետք է հակասեն ՀՀ գործող օրենսդրությանը:

2.2. Խմբագրության աշխատանքները ղեկավարում է Հիմնադրի կողմից նշանակված գլխավոր խմբագիրը, որը իրականացնում է Հիմնադրի ծրագրերը՝ մասնագիտական ինքնուրույնության հիման վրա:

2.3. Գլխավոր խմբագիրը իրականացնում է «Ակունք»-ի ընդհանուր ղեկավարությունը և կազմակերպում է ընթացիկ աշխատանքները: Նա պատասխանատու է աշխատանքի արդյունքի, կանոնադրական պահանջների կատարման համար:

2. 4. Գլխավոր խմբագիրը իրավունք ունի՝

ա/ հանդեսգալ խմբագրության անունից կառավարման և դատական

մարմիններում,

բ/ հոդվածագրի համաձայնությամբ խմբագրել նրա կողմից ներկայացված նյութերն ու տեղեկությունները,

գ/ հրավիրել խմբագրության խորհուրդ և նախագահել խորհուրդների նիստերում,

ե/ կայացնել որոշումներ խմբագրության գործունեության ընթացիկ հարցերի

վերաբերյալ,

զ/ խմբագրության անունից վարել բանակցություններ և ստորագրել «Ակունք»-ի խմբագրական խորհուրդի կողմից ընդունված փաստաթղթերը:

## 2.5. Գլխավոր խմբագիրը պարտավոր է՝

ա/ հսկողություն իրականացնել խմբագրության արդյունավետ գործունեության նկատմամբ,

բ/ պատասխանատվություն կրել խմբագրության նյութերի հավաստիության

«Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված պահանջների կատարման համար,

գ/ չհրապարակել պետական գաղտնի տեղեկություններ, պատերազմ, բռնություն, ազգային և կրոնական թշնամանք կրող, ինչպես նաև կեղծ և չստորագրված նյութեր,

դ/ պահպանել «ՀՀ հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված պահանջները,

ե/ հոգ տանել մայրենի լեզվի անաղարտության համար

2. 6. «Ակունք»-ի յուրաքանչյուր համարը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

հրատարկության ավանդումը, հիմնադիրը, խմբագիրը, հրատարակիչը, տպաքանակը, տպարանի հասցեն:

### 3. Հիմնական պարտականություններն ու խնդիրները

Որպես գիտամեթոդական պարբերական այն իր էջերում հրապարակելու է կյանքի և գիտության բոլոր բնագավառների իրավական կարգավորմանը, գործող օրենքների էությանը, նպատակներին ու խնդիրներին վերաբերվող նյութեր, գիտական հոդվածներ, ուսումնամեթոդական և գիտամանկավարժական հետազոտություններ:

4. Հիմնադրի իրավունքներն ու պարտականությունները

4.1. «Ակունք»-ի գործունեությունը ապահովելու նպատակով հիմնադիրը խմբագրությանն ապահովում է աշխատապայմաններով, գույքով, թղթով, տեխնիկայով և այլ անհրաժեշտ միջոցներով:

4. 2. Հիմնադիրը կարող է դադարեցնել կամ լուծարել խմբագրության գործունեությունը սույն կանոնադրական պահանջները խախտելու դեպքում:

4. 3. Հիմնադիրը՝

Ա) նշանակում և ազատում է «Ակունք»-ի գլխավոր խմբագրին և պատասխանատու քարտուղարին,

Բ) կասեցնում և դադարեցնում է խմբագրության գործունեությունը,

Գ) տնօրինում է խմբագրության ֆինանսական միջոցներն ու գույքը,

Դ) իրականացնում է խորհրդատվական գործունեություն:

5. Խմբագրության ֆինանսական միջոցների գոյացման և օգտագործման կարգը

5. 1. Խմբագրության ֆինանսական միջոցները գոյանում են՝

Ա) հիմնադրի կողմից կատարած մասնահանումներից,

Բ) ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից տրված նվիրատվություններից,

Գ) ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

5.2. Խմբագրության ֆինանսական միջոցները և գույքը համարվում է հիմնադրի սեփականություն և տնօրինվում է նրա կողմից:

5.3. Խմբագրության գույքի փչացման կամ կորստի դեպքում ֆինանսական պատասխանատվությունը կրում է այն անձը, որի օգտագործմանը հանձնվել է այդ գույքը: